ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-027-17.09.2021-ՏՏԳՇ-011/0) վերաբերյալ ներկայացված առաջարկների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 105-րդ հոդվածում լրացնել նոր 3.1-ին մաս, հետեւյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-րդ կետով սահմանված լիազորությունն իրականացնելիս Երեւանի քաղաքապետարանին մասնագիտական աջակցություն է ցուցաբերում տարածքային կառավարման բնագավառի պետական լիազոր մարմինը»: Նշված ձեւակերպումից բխում է, որ տարածքային կառավարման բնագավառի պետական լիազոր մարմնին վերապահվում է քաղաքապետարանին մասնագիտական աջակցության ցուցաբերում, մինչդեռ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ հոդվածի համաձայն՝ «Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով իրականացնում են իրավական եւ մասնագիտական հսկողություն»: Օրենքի 105-րդ հոդվածը եւս վերաբերում է քաղաքապետի եւ ավագանու լիազորությունների նկատմամբ իրավական եւ մասնագիտական հսկողությանը: Նշված հոդվածների դրույթներից բխում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների, այլ ոչ քաղաքապետարանի, նկատմամբ կարող է իրականացվել մասնագիտական	Ընդունվել է	Ընդունվել է

			հսկողություն, այլ ոչ աջակցություն: Հիմք ընդունելով վերոգրյալը եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկում ենք Նախագծում կիրառել Օրենքով սահմանված հասկացություններ՝ լրացվող դրույթի բովանդակությունը համապատասխանեցնելով Օրենքի համապատասխան հոդվածի վերնագրին:		
		Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծ 2-րդ հոդվածով լրացվող 3.1-ին մասում «ցուցաբերում» բառից հետո նշել «Հայաստանի Հանրապետության» բառը՝ ապահովելով Օրենքում միեւնույն միտքն արտահայտելիս միեւնույն բառերի կիրառումը: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից:	Ընդունվել է	Ընդունվել է